ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/300

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
Մասնակից՝ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ

Մասնակցությամբ՝
«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Սարդարյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/5» ծածկագրով գնանշման հարցում, էլեկտրոնային տեղեկատվական ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 29.12.2020թ.-ի թիվ 26/26-1/19767-2020 գրությամբ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 25.12.2020թ. թիվ 02/07.3/7557-2020 գրության հիման վրա, 29.12.2020թ.-ին «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 29.12.2020թ.-ին:

Բողոքներ քննող անձի 30.12.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/300 համարի ծածկագիրը:

20.01.2021թ.-ին և 27.01.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 20.01.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 27.01.2021թ.-ին:

2. <u>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը 25.12.2020թ. թիվ 02/07.3/7557-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ, որ ԳՀԾՁԲ-ԱԻՆ-20/5 ծածկագրով էլեկտրոնային տեղեկատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ընթացակարգին հայտ են ներկայացրել «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն և «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ն: 21.12.2020թ գրությամբ «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ն գրությամբ հրաժարվել է ընթացակարգի հետագա մասնակցությունից (կցվում է):

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» պարբերությունը խնդրում եմ նախաձեռնել «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ին

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/5» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 30.12.2020թ.-ին գրությամբ դիմել է «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.12.2020թ.-ի թիվ 26/26-1/19767-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստին նաև ներկայացրել է գրավոր դիրքորոշում՝ հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով Ձեր կողմից ուղարկված՝ 29.12.2020թ. ՍՅ-ԼՕ-2020/300 հայտարարությունը, հայտնում ենք, որ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն չի մասնակցել ԳՀԾՁԲ-ԱԻՆ-20/50 ընթացակարգին, այլ սխալմամբ մասնակցել է ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/5 ընթացակարգին՝ ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/7-ի ընթացակարգի փոխարեն, որի մասին արդեն իսկ գրավոր տեղեկացվել է 21.12.20թ.-ին ՀՀ ԱԻՆ քարտուղար Վ. Օհանյանին:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում ենք կատարել փոփոխություններ հետագա փաստաթղթերում, հիմք ընդունելով նաեւ Հանձնաժողովի կողմից կայացված Արձանագրություն N 2-ը, որտեղ նույնպես նշված է ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/5 ընթացակարգ:»:

4. <u>ՍՅ-LO-2020/300 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից էլեկտրոնային տեղեկատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով 03.12.2020թ.-ին հայտարարվել է «ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն:

ii. 21.12.2020թ.-ին «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել, որ վերջինս սխալմամբ է մասնակցել ՀՀ ԱԻՆ կողմից հրապարակված ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/5 ծածկագրով ընթացակարգին, այլ պետք է մասնակցեր ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/7 ծածկագրով ընթացակարգին, ուստի խնդրել են չեղարկել ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/5 ընթացակարգի «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ի մասնակցության հայտը:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն 21.12.2020թ.-ին գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել, որ հրաժարվում է գնման հետագա գործընթացի մասնակցությունից:

iv. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մերժել մասնակցի հայտը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.12.2020թ.-ի թիվ 26/26-1/19767-2020 գրությամբ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, եթե մասնակիցը հայտերը բացելուց հետո հրաժարվում է գնման գործընթացին հետագա մասնակցությունից, նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից էլեկտրոնային տեղեկատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով 03.12.2020թ.-ին հայտարարված «ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն 21.12.2020թ.-ին գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել, որ սխալմամբ է մասնակցել ՀՀ ԱԻՆ կողմից հրապարակված ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/5 ծածկագրով ընթացակարգին, այլ պետք է մասնակցեր ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/7 ծածկագրով ընթացակարգին, ուստի խնդրել են չեղարկել ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/5 ընթացակարգի «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ի մասնակցության հայտը: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի նշված գրությունը որոշել է մերժել մասնակցի հայտը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն Հանձնաժողովին ուղղված գրությամբ, հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Ուստի, նման պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.12.2020թ.-ի թիվ 26/26-1/19767-2020 գրությամբ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/300 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**